

Եթէ գեղեցիկ և ազնուական իմն իցէ վատահամբաւ առնելզերիցունսն, զորոց ասէ մեզ պատմութիւն եթէ զտունս իւրեանց ետուն 'ի հիւրանոց և զանձինս 'ի սպասաւորս ախտաժետաց, ներողեղեն, աղօթս մատուցին, ձեռն ետուն և միսիթարեցին զհիւանդս, և յորդեգիրս առին զորբացեալսն : Եյւ ուրախութիւն անձին համարեցաւ յանդիման առնելզնոսա իբրու աղմկայարոյց, որ խոռվայոյզ շաղակրատանօքն իւրեանց գրգուիցեն զժողովուրդն 'ի յուսահատութիւն և 'ի սպանութիւն . և իբրու շորթիչս կտակաց և արծաթասէրս դառնացուցանիցեն զհոգեվարսն Հարտեայ մնոտի շաղփաղփանօք և ափիոնիւ, որպէս զի մտցեն 'ի ժառանգութիւն նոցա, և իբրու վատասիրտս փախչեցին 'ի տեսլենէ մաղձացաւաց . որպէս նենդաւորս ընթանայցեն ընդ հիւանդանոցս, ոչ 'ի խնամելզհիւանդս և օգնական լինելաղքատաց, այլ 'ի տեսանել Որօգ Ռոմբոնս յանդգունս և անամօթ մերկալանջս, և խափան արկանելզայնպիսիս օրինաւոր տնարարութեան ուստերաց և դստերաց Ճոխաց, զորս անժառանգել կամէին : Այս Ոիւ այսպիսի տայ կերպարանս քրիստոնէութեան, երիցանց, և ամենեցուն՝ որ գամմի ազնուախոչ եղեն մտօք 'ի ժամանակս մաղձացաւին . կամեցաւ յանդիման առնելզամօթալի և զսոսկալի ախտս մարդկութեան, զերկիւղ, զվատութիւն, ըզցանկութիւն, զատելութիւն, զնենդութիւն, զարիւնաշաղախն ձեռօք զկատաղութիւն, զանկարեկիր բարս և զանդգամ անբանութիւն, զանասնային և զյիմար անառակութիւն . փակեաց զաշն զի մի տեսցէ զարութիւն, զգթութիւն զառատատուրն ձեռօք, զդիւցազնական իմն զանձին մոռացութիւն և զամենայն առաքինութիւնս գթոյ և ներողամտութեն : Եյւ կարի իսկ քաջ . պատուհասեցաւ և ըստ տեսութեան արուեստի բարոյական պատժովն, որովխցաւ մտաց

նորա աղբիւր հիանալի գեղեցկութեց ըստ մատենագրութեան մասին : Դիք հնար . հրաշալի հանդէս անձնանուեր և ազնուամիտ քաջութեան, որով յայտնի լինի 'ի բնութեան մերում շունչ արարչագործին Լուսուծոյ, առաւելես ջեռուցանէ զսիրտ մարդոյ, քան թէ ճշգրտատիպ նկարագրութիւն դիական նեխելոյ, կամտեսարանաց խողխողման : Ոիրտ առաւելշարժի յայնմանէ՝ որ ամբառնայ զնա 'ի վեր առ Լուսուած, քան թէ յայնմանէ՝ որ նուաստացուցանէ մինչեւ յանբան և մինչեւ յանկենդան բնութիւն :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

(Ո) Է՞նչողէս բոլրայն շինուածն մը առելը ածան է՛լլայ ժան զբառակուսին, և է՞նչողէս ժառակուսին առելը ածան զբառանչիւնին :

Լուսկ առաջ Բազմավիպիս Ուարտ ամսուն մէջ (երես 91) կոստանդնուպօլսոյ անձրեւաչափին տակը ծանօթութեան մէջ ջրշեղը նուստանը շինելու համար ըսեր եինք, թէ բոլորաձեւը աւելի աժան կ'ըլլայ քան զքառակուսին, և քառակուսին աւելի աժան քան զքառանկիւնին : Լուսրատս տեղի տալով ոմանց տարակուսելու՝ թէ արդեօք սխալմամբ, կամթէ վեր 'ի վերոյ հայեցուածով մը այսպէս առաջարկեցինք . զի ինչպէս կ'ըլլայ, կ'ըսեն, որ գործածուած նիւթերը մի և նոյն ըլլան, և միայն ձեզին պատճառով աժան կամսուղ ըլլայ շինուածք մը . աս բանս քիչ մը խելքի դէմգալով, լուծմունքը իննդրեր եին :

Հայոց ան տարակուսող անձին մաս-

1 Քառակուսի կ'ըսենք, երբոր չորս անկիւնը և չորս կողմը հաւասար են միմեանց . իսկ քառանկիւնը՝ չորս անկիւնը մէկմէկու հաւասար . բայց չորս կողմը միմեանց հաւասար չեն :

նաւոր թղթով պատասխանելուն տեղը, արժանի համարեցանք տպագրութեամբ հրատարակել պատասխանին, որպէս զի թէ որ ուրիշներուն ալ այսպիսի տարակոյս մը եկած է նէ, անոնց միտքն ալ համզուի :

Ուստի դնենք թէ իրեք հոգի ընդարձակ երկիր ունին, և մէյմէկ արտավար՝ այսինքն 1600 քառակուսի կանգունը զատելով՝ մէյմէկ պարտէզ կ'ուզեն շինել շրջապատը պատ դարձնելով։ Ա'նկը կատարեալ քառակուսի կ'ուզէ շինել. ուստի 40 կանգուն լայնք և 40 կանգուն երկայնութիւն կուտայ պարտիզին։ Երկրորդը քառանկիւնի, այսինքն 20 կանգուն լայնք և 80 կանգուն երկայնութիւն կուտայ։ Իսկ երրորդը՝ աւելի երկայն, այսինքն 10 կանգուն լայնք և 160 կանգուն երկայնութիւն. որ իրեք պարտէզն ալ մէկմէկու հաւասար 1600 քառակուսի կանգուն կ'ըլլան։

Ա'նջինը կը շինէ իւր պարտէզը, և 164 կանգուն պատով տեղը կը գոցէ. երկրորդը՝ 204 կանգունով. իսկ երրորդը՝ 344 կանգուն պատ շինելու կը հարկաւորի։ Աւ դնենք թէ մէկ չորրորդ մը՝ նոյնչափ մեծութեամբ պարտէզ մը, բայց կլորաձեւ շինել ուզէր. ան ալ 145 կանգուն պատով կրնար գոցելիւր տեղը²։

Դնենք թէ աս ամէն քաշուած պատերուն չորս չորս կանգուն բարձրութիւն տային։ Ա'նջին երկրին պատը կ'ըլլար 656 քառակուսի կանգուն. երկրորդինը կ'ըլլար 816 կանգուն. երրորդինը 1376 կանգուն. իսկ բոլորաձեինը կ'ըլլար 580 քառակուսի կանգուն։ Աւ եթէ շինողէք և քա-

րի գին՝ ամէն քառակուսի կանգունին հինգ հինգ դուշ ծախք ըլլար,

Աւ ջինին ծախքը կ'ըլլար	· դուշ	3280
Երկրորդինը	· · · ·	" 4080
Երրորդինը	· · · ·	" 6880
Իսկ կլորաձեինը	· · · ·	" 2900

Ահա այս հաշուովս յայտնապէս կ'երևնայ, թէ ինչպէս միայն ձեռով մէկ շինուածքի մը գինը կը տարբերի, թէ և երկրին տարածութիւնը և պատերուն աժողջէքը մի և նոյն ըլլան։ որովհետեւ բոլորաձեւ պարտէզը 380 դուշ աւելի աժան է քան զքառակուսին, 1180 դուշ քան զքառանկիւնին, և 3980 դուշ քան զերկայն քառանկիւնին. որ ըսել է թէ փոխանակ մէկ երկայն քառանկիւնի պարտէզ շինելուն տեղը՝ երկու բոլորաձեւ պարտէզ կրնար շինել, և 1080 դուշ ալ կ'եւելնար։ Բացյայսմանէ, տեղի ալ վաստակ կամ կորուստ կայ մէկմէկու բաղդատելով։ որովհետեւ կլորաձեւ պարտէզը՝ քառակուսիին բաղդատելով 19 կանգուն, երկրորդ պարտիզին բաղդատելով 59 կանգուն, և երրորդին բաղդատելով 199 կանգուն տեղաւելի քիչ կորսընցուցած կ'ըլլայ։

Ձևէն եղած օգուտ և վնասը ցըցունելին վերջը, արժանի կը համարիմ ծանուցանել, թէ մեծութիւնն ու պզտիկութիւնն ալ կրնան գնոյ զանազանութիւն պատճառել։ Օ՞ր օրինակ. մէկ ամպար մը որ 1000 քոռագորեն կ'առնէ, աւելի աժան կ'ըլլայ քան երկու ամպարը՝ որ երկուքը մէկտեղ նոյնչափ ցորեն առնեն։ Աւ ասոր ալ ապացոյցը աւելի դիւրաւ հասկրնալու համար, վերի պարտէզներուն մէկը օրինակ առնենք. զոր օրինակ քառակուսի պարտէզը որ 1600 կանգուն տարածութիւն ունի, և որուն պատը 3280 դուշով շինուեցաւ, թէ որ երկու պարտէզ շինէինք նոյն մեծութեամբ, յայտնի է որ գինն ալ կրկնապատիկ կ'ըլլար։ Իսկ թէ որ մէկ մեծ պարտէզ մը նմանապէս քառակուսի շինէինք, որուն տարածու-

1 Տէ՛ռիւմ։

2 1602 քառակուսի կանգուն (արշն) տարածութիւն ունեցող կլորաձեւ երկրին շրջապատը է 141 կանգուն և 21 մատնաչափ. որուն տրամադիմը կ'ըլլայ 45 կանգուն և 4 մատնաչափ։ Իսկ մնք 145 կանգուն շրջապատ դրինք, որովհետեւ պատին հասուութիւնը պարտիզին միջոցէն գուրս տուինք, ինչպէս միւս քառակուսի երկրներունը, որպէս զի մէջի պարտէզները ամբողջ 1600 կանգուն մնան։

1 Քիւմ։

Թիւնը կրկնապատիկ ըլլայ , այսինքն
3200 կանգուն քառակուսի , կրնայինք
գոցել 230 կանգուն շրջապատով¹ .
որուն նմանապէս նոյն բարձրութիւն
և նոյն աժողէք տալով՝ 4605 դուշ
ծախք ըրած կ'ըլլայինք , փոխանակ
6560 դուշի որ երկու պարտէզին հա-
մար պէտք էր ծախք ընել : Խսկ եթէ
չորս անգամ մեծցընենք պարտիզին
տարածութիւնը , 6480 դուշով կրնայ
շինութիւնապատը , փոխանակ 13120 դուշի
որ ծախք ըրած կ'ըլլայինք թէ որ չորս
զատ պարտէզ շինէինք : Խւ ասոր
պատճառը ան է որ շրջապատը կրկնա-
պատկելով՝ միջոցը կը քառապատկի ,
այս ինքն չորս անգամ կը մեծնայ² :

Երդ այս տուած հաշիւնիս ինչպէս
Ճմարիտ է ընդարձակ երկրի մը վրայ ,
նմանապէս Ճմարիտ է տան՝ ջրշեղի
և այլինչ և իցէ պղտի շինուածներու
վրայ ալ : Խւ ասկէ յայտնապէս կը
հետեւի , թէ մէկ տուն կամ շինուածք
մը որչափ քառակուսի ձեզն մօտե-
նայ , այնչափ աժան կ'ըլլայ . և որչափ
նեղ և երկայն ըլլայ , այնչափ աւելի
սուղ կ'ըլլայ : Ուստի եթէ մէկը որուն
երկիրը արգելք մը ըլլար , շինուածքը
որչափ կարելի է նէ քառակուսի ձեզն
մօտեցընէնէ , այնչափ իրեն շահաւոր
կ'ըլլայ : Խւ այս ձեզն պատճառաւ
կրնայ ըլլալ որ ոմանց շինուածքը ա-
ւելի աժան , և ոմանցը սուղ ըլլայ .
և տեղի տայ վիճելու Ճարտարապե-
տին հետ , որ գուցէ ան ալ չփիտնայ
Ճմարիտ պատճառը :

Լոյնպէս մէկ արձըթէ աման մը
միւն նոյն կշռով՝ աւելի ջուր կ'առ-
նէ աստիճանաբար՝ գնտածներ քան
զծուածներ , քան զգլանածներ , քան
զիսրանարդը , և այլն և այլն :

* *

¹ 3200 կանգուն տարածութիւն ունեցող քա-
ռակուսի երկրին կողմը 56 կանգուն 14 մատնա-
չափ կ'ընէ , որուն շրջապատը 230 կանգուն կ'ըլլայ :

² 40 կանգուն կողմ ունեցող քառակուսիին մի-
ջոցը 1600 կանգուն կ'ընէ . խսկ 80 կանգուն կողմ
ունեցող քառակուսիին միջոցը 6400 քառակուսի
կանգուն կ'ընէ :

ԱՐՈՒԵՍՏ

Գ .

Դաստիարակութիւն հանելու հերթը :

ԴԱԿՆԴԵՂԻՆ հիւթը հանելու ա-
րուեստը չգիտցողին դիւրին բան մը
կ'երենայ . բայց ամէն աշխատանքնե-
րէն մեծն ու դժուարը աս է : Իան-
ջարը կարծածէդ աւելի մէջը շաքարի
հիւթ ունի . խսկ ջղերը այնչափ քիչ
են որ մարդ չկրնար իմանալ թէ ինչ-
պէս այնչափ քիչ ջղերով արմատը
այնչափ պինդ ու դիւրաթեկ կ'ըլլայ :
Ուէ որ շաքարի հիւթը հանելու գոր-
ծողութիւնդ որչափ որ կարելի է լաւ
ու ճիշդ ընես , շատ ջրոտ չեղած բան-
ջարէն ալ հարիւրին գրեթէ ութսու-
նը կը շահիս . բայց գիտնալու է որ
հիւթը թանձրանալէն ետքը , թէ որ
չորցնելու համար բացը դնես , կը
տեսնես որ չորսին իրեք մասը կը կոր-
սուի ու կը փանանայ : Հարիւրին ութ-
սունուվեց կը շահիս՝ թէ որ Ճակնդե-
ղը գէպ 'ի երկայնքին մանր մանր ջար-
դես ու բաւական տաքութեամք փը-
ռան մը մէջ չորցնես . բայց աս հիւ-
թին կորուստը մեծ բան մը սեպելու
է , վամն զի պտղին մէջ շաքարի հիւ-
թէն զատ՝ հարիւրին գրեթէ տաս-
ուերկուքը ջղեր ու օտար նիւթեր են :
Լորտած կտորները չորցնելէն ետքը ,
մէջի նիւթը աս կերպով կրնաս հա-
նել . բոլորը մէկէն պաղ ջրի մէջ դիր ,
կը տեսնես որ այնչափ կ'ուռին որ չոր-
ցած ըլլանին ամենսեին չիմացուիր .
բայց որչափ որ ջուր ծծեն՝ այնչափ ի-
րենց շաքարային հիւթը դուրս կու-
տան . թէ որ իրեք չորս անգամ ջուռը
փոխես՝ ամէն մէկ անգամուն տաս-
նական ժամը թողլով , ու ետքը նորէն
չորցնես ու կշռես , իրենց առջի ծան-
րութեանը հարիւրին իրեքը կամ շատ
շատ չորսը հազիւ կը գտնես : Ո՞էկ
կենդինար՝ Ճակնդեղին մէջ 96 լիպ-

1 Գանդար :